ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՅԱՐՄԱԼՈՅԱՆ ՀՐԱՉԻԿ ՄԱՆՎԵԼԻ

ՄԱԿ-Ի ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԵՐԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎԱՍՏԵՂԾՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

ԺԲ.00.06 - «Միջազգային իրավունք» մասնագիտությամբ
իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական
աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2015

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

ЯРМАЛОЯН ГРАЧИК МАНВЕЛОВИЧ

РОЛЬ МЕЖДУНАРОДНОГО СУДА ООН В ПРОЦЕССЕ МЕЖДУНАРОДНОГО ПРАВОТВОРЧЕСТВА

АВТОРЕФЕРАТ

**Диссертации на соискание ученой степени кандидата
юридических наук по специальности 12.00.06
“Международное право”**

ЕРЕВАН – 2015

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում

Գիտական ղեկավար՝ իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Վ. Քոչարյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆ. Ի. Ֆարխուտդինով

իրավաբանական գիտությունների թեկնածու Ա. Դիլանյան

Առաջատար կազմակերպություն՝ Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2015թ-ի մայիսի 27-ին՝ ժամը 14^{30}-ին Երևանի պետական համալսարանում գործող ԲՈՀ-ի իրավագիտության 001 մասնագիտական խորհրդի նիստում (0025, ք. Երևան, Ալեք Մանուկյան 1):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանի գիտաշխատողների ընթերցասրահում:

Սեղմագիրն առաքված է 2015թ-ի ապրիլի 27-ին:

Մասնագիտական խորհրդի գիտ.
քարտուղար, իրավ.գիտ.թեկնածու Ա. Մանասյան

Тема диссертации утверждена в Ереванском государственном университете

Научный руководитель: кандидат юридических наук, доцент В. Кочарян

Официальные оппоненты: доктор юридических наук, профессор И. Фархутдинов
кандидат юридических наук А. Диланян

Ведущая организация: Российско-Армянский (Славянский) университет

Защита состоится 27-ого мая 2015г., в 14.30 часов на заседании Специализированного совета ВАК 001 по юриспруденции при Ереванском государственном университете (0025, г. Ереван, ул. Алека Манукяна 1).

С диссертацией можно ознакомиться в читальном зале научных работников библиотеки ЕГУ.

Автореферат разослан 27-ого апреля 2015.

Ученый секретарь специализированного
совета, кандидат юридических наук А. Манасян

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ: ՄԱԿ-ի միջազգային դատարանի ստեղծումից ի վեր տեղի է ունեցել միջազգային դատարանակազմության ինստիտուտի քանակական և որակական աննախադեպ զարգացում, որն իր հերթին հանգեցրել է միջազգային արդարադատության մարմինների դերակատարության բարձրացմանը միջազգային իրավունքում: ՄԱԿ-ի միջազգային դատարանին միջազգային իրավունքի գիտությունում մի շարք ականավոր մասնագետների կողմից վերագրվում է իրավաստեղծ հատկություն: Մյուս կողմից այդ դատարանը ձևավորել է կայուն նախադեպային իրավունք, որն անքակտելիորեն կապված է իր կողմից միջազգային իրավունքի զարգացման առաքելության հետ և պայմանավորված է այդ դատարանի կայուն դատական պրակտիկայով:

ՄԱԿ-ի միջազգային դատարանի գործունեության վերլուծությունը ցույց է տալիս, որ այդ դատարանի կանոնադրությունն այլևս ի վիճակի չէ ամբողջությամբ արտացոլել այդ դատարանի ժամանակակից կարգավիճակը միջազգային իրավունքում, որի կարևորագույն բնորոշիչ տարրերից է դարձել այդ դատարանի ներգործությունը միջազգային իրավաստեղծման գործընթացի վրա: Մինչ այսօր միջազգային իրավունքի գիտությունում բավարար չափով ուսումնասիրված չէ ՄԱԿ-ի միջազգային դատարանի որոշումների կապը միջազգային իրավաստեղծման հետ:

ՄԱԿ-ի միջազգային դատարանի որոշումների կարգավիճակի համակողմանի ուսումնասիրությունը անհրաժեշտ է միջազգային իրավաստեղծման ոլորտում այդ դատարանի որոշումների դերակատարությունը հստակեցնելու և այդ դատարանի կանոնադրությունում համապատասխան փոփոխությունների և լրացումների առաջարկություններ անելու համար:

Հայաստանի Հանրապետության միջազգային իրավունքի գիտությունում բազմաթիվ ուսումնասիրություններ են կատարվել միջազգային իրավունքի աղբյուրների վերաբերյալ, իսկ ՄԱԿ-ի միջազգային դատարանի որոշումների՝ միջազգային իրավաստեղծման գործընթացում դերակատարության վերաբերյալ չի կատարվել համակողմանի ուսումնասիրություն:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ: Ատենախոսության հիմնական նպատակն է գոյություն ունեցող տարբեր տեսությունների, մոտեցումների և հայեցակարգերի համատեքստում ուսումնասիրել ՄԱԿ-ի միջազգային դատարանի որոշումների դերակատարությունը միջազգային իրավաստեղծման գործընթացում:

Նշված նպատակի իրագործման կապակցությամբ խնդիր է դրվել.

• ուսումնասիրել ՄԱԿ-ի միջազգային դատարանի որոշումների կարգավիճակը ժամանակակից միջազգային իրավունքում և դրանց հարաբերակցությունը միջազգային իրավաստեղծման գործընթացի հետ,

• վերլուծել ՄԱԿ-ի միջազգային դատարանի որոշումների նախադեպային բնույթը և միջազգային իրավունքի զարգացման առաքելությունը միջազգային իրավաստեղծման տեսանկյունից,

• հետազոտել ՄԱԿ-ի միջազգային դատարանի որոշումների ներգործությունը միջազգային սովորութային նորմերի ձևավորման վրա,

• ուսումնասիրել ՄԱԿ-ի միջազգային դատարանի որոշումների ազդեցությունը պետությունների վարքագծի վրա,

• ուսումնասիրել ՄԱԿ-ի միջազգային դատարանի որոշումների ներգործությունը միջազգային իրավահարաբերությունների կարգավորման բացերը լրացնելու վրա:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՔԸ: ՄԱԿ-ի միջազգային դատարանի և միջազգային իրավաստեղծման գործընթացի միջև կապի վերաբերյալ տեսական ուսումնասիրությունները հայկական իրականության մեջ գրեթե բացակայում են: Մի շարք հայրենական հեղինակներ այդ կապի առանձին ասպեկտներին որոշակիորեն անդրադարձել են իրենց աշխատություններում, որոնցից կարելի է առանձնացնել Վ. Հովհաննիսյանի, Վ. Քոչարյանի, Ե. Կիրակոսյանի, Ա. Եսայանի, Տ. Սիմոնյանի, Ռ. Քալամքարյանի աշխատությունները:

ՄԱԿ-ի միջազգային դատարանի որոշումների և միջազգային իրավաստեղծման միջև կապին վերաբերող հիմնախնդիրները հետազոտության են ենթարկվել ինչպես արևմտյան, այնպես էլ հետխորհրդային մի շարք երկրների միջազգային իրավունքի ականավոր մասնագետների գիտական աշխատություններում, որոնց շարքում կարելի է նշել Հ. Լաութերփախտի, Մ. Շահաբուդդենի, Մ. Շափիրոյի, Մ. Շոուի, Ռ, Ջենինգսի, Ջ. Ֆիցմորիսի, Մ. Հուդսոնի, Ֆ. Ջեսսափի, Ու. Սանդոլցի, Ն. Փիտերսոնի, Թ. Գինսբուրգի, Ա. Կասսեսեի, Օփփենհայմի, Շ. Հոբեի, Բ. Կեմպենի, Ք. Հիլգրուբերի, Կ. Իփսենի, Վ. Գ. Վիտցթումի, Գ. Տունկինի, Ա. Ֆերդրոսի, Ֆ. Կոժևնիկովայի, Ե. Կորովինայի, Ի. Լուկաշուկի, Յու. Կոլոսովի, Վ. Կուզնեցովի և մի շարք այլ հեղինակների աշխատությունները:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՆՈՐՄԱՏԻՎ ՀԻՄՔԸ: Հետազոտության նորմատիվային հենքը կազմել են ՄԱԿ-ի, ՄԱԿ-ի միջազգային դատարանի և Միջազգային արդարադատության մշտական պալատի, ՄԱԿ-ի միջազգային իրավունքի հանձնաժողովի, Նախկին Հարավսլավիայի

գործով միջազգային քրեական տրիբունալի կանոնադրությունները, տարբեր միջազգային կոնվենցիաներ, հռչակագրեր և մի շարք այլ միջազգային փաստաթղթեր:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԸ: Ատենախոսությամբ առաջադրված խնդիրների ուսումնասիրության ընթացքում կիրառվել են գիտական ուսումնասիրության թե ընդհանուր, թե մասնավոր մեթոդները: Մասնավորապես՝ կարևորվել են դիալեկտիկական, պատմական, համակարգային-կառուցվածքային, վերլուծության, ընդհանրացման, համեմատական-իրավական, իրավական նորմերի լեզվատրամաբանական մեկնաբանման մեթոդները, որոնց կիրառմամբ վերլուծվել են ՄԱԿ-ի միջազգային դատարանի որոշումների կարգավիճակին առնչվող միջազգային փաստաթղթերը, գիտահետազոտական աշխատանքները, այդ դատարանի որոշումները, վեր են հանվել այս բնագավառում առկա տեսական և գործնական հիմնախնդիրները, որոնց լուծման վերաբերյալ առանձին առաջարկություններ են արվել:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ: Ատենախոսությունում հստակեցվել են միջազգային իրավաստեղծման գործընթացում ՄԱԿ-ի միջազգային դատարանի դերակատարության ծավալն ու ձևերը:

Կատարված ուսումնասիրությունների հիման վրա հեղինակի կողմից ՄԱԿ-ի միջազգային դատարանի կանոնադրությունում փոփոխություններ և լրացումներ կատարելու առաջարկություններ են արվել:

Գոյություն ունեցող տարբեր տեսությունների և մոտեցումների ներքո համալիր կերպով ՄԱԿ-ի միջազգային դատարանի և Ազգերի լիգայի Միջազգային արդարադատության մշտական պալատի որոշումների հարաբերակցությունը միջազգային իրավաստեղծման գործընթացի հետ ենթարկվել է համակարգային, ամբողջական ուսումնասիրության:

Տեսական հարթությունում գիտական մեթոդաբանությամբ մշակված հայեցակարգի միջոցով նորովի են ներկայացվել ՄԱԿ-ի միջազգային դատարանի որոշումների և միջազգային իրավաստեղծման միջև հարաբերակցության մի շարք հիմնախնդիրներ: Ներկայացվել է նաև միջազգային դատարանների որոշումների փաստացի ներգործությունը միջազգային իրավաստեղծման գործընթացի վրա:

Ատենախոսության թեման առաջին անգամ է ուսումնասիրվում Հայաստանի Հանրապետությունում:

Ատենախոսության գիտական նորույթը դրսևորվում է պաշտպանության ներկայացվող դրույթներում և ՄԱԿ-ի միջազգային դատարանի կանոնադրության կատարելագործմանն ուղղված առաջարկություններում:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ: Ատենա-

խոսության շրջանակներում կատարված հետազոտությունների տեսական նշանակությունը նախ և առաջ պայմանավորված է նրանով, որ այն ՀՀ-ում հանդիսանում է միջազգային իրավաստեղծման գործընթացում ՄԱԿ-ի միջազգային դատարանի դերակատարության ծավալի ու ձևաչափի հիմնախնդիրների ուսումնասիրությանը նվիրված առաջին համալիր և ամբողջական հետազոտությունը: Ատենախոսության մեջ տեղ գտած մի շարք վիճահարույց հարցերի վերաբերյալ առաջադրված տեսական և գործնական լուծումները միջազգային արդարադատության մարմինների որոշումների և միջազգային իրավաստեղծման գործընթացի կապը և հարաբերակցությունը ուսումնասիրողների համար կարող են տեսական հիմք հանդիսանալ: Այդ ամենը ունի նաև ճանաչողական նշանակություն:

Ատենախոսության գործնական նշանակությունը դրսևորվում է նրանում, որ ատենախոսությունում ներկայացված առաջարկությունները կարող են հիմք հանդիսանալ ՄԱԿ-ի միջազգային դատարանի կանոնադրության կատարելագործման և ժամանակակից միջազգային-իրավական իրողություններին համապատասխանեցնելու համար. արդյունքում դատարանի կանոնադրությունում առավելագույնս կարտացոլի այդ դատարանի դերակատարությունը ժամանակակից միջազգային իրավունքում:

Հետազոտության արդյունքները կարող են օգտակար լինել նաև տարբեր բուհերում ատենախոսության առարկայի հետ առնչվող դասընթացների դասավանդման, ինչպես նաև բարձրագույն ուսումնական հաստատությունների կողմից իրականացվող այլ գիտահետազոտական գործունեության ընթացքում:

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ:

1. ՄԱԿ-ի միջազգային դատարանի գործունեության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այդ դատարանը, իր կանոնադրությամբ ամրագրված գործառույթներից բացի, ներկայումս փաստացիորեն իրականացնում է ի սկզբանե այդ դատարանի համար չնախատեսված նոր առաքելություն: ՄԱԿ-ի միջազգային դատարանի դերակատարությունը միջազգային իրավունքի համակարգում ձեռք է բերել բոլորովին նոր որակական հատկանիշներ: Այստեղ գործ ունենք նպատակների հետերոգենության կոնցեպցիայի հետ, որը ենթադրում է, որ ի սկզբանե այդ միջազգային դատարանի համար սահմանված գործունեության նպատակը ժամանակի ընթացքում վերաճել է սկզբնական նպատակի հետ այլևս ամբողջությամբ չհամընկնող այլ նպատակի, այլ կերպ ասած՝ ժամանակի ընթացքում ՄԱԿ-ի միջազգային դատարանը սկսել է իրականացնել նաև այլ առաքելություն: ՄԱԿ-ի միջազգային դատարանի որոշումներն այլևս

զուտ միջազգային վեճերի խաղաղ լուծման և իրավունքի նորմերի սահմանման օժանդակ միջոցներ չեն:

2. Միջազգային իրավունքի համակարգում ՄԱԿ-ի միջազգային դատարանի տեղն ու դերը որոշող նոր հատկանիշ է դարձել այդ դատարանի որոշումների ներգործությունը միջազգային իրավաստեղծման գործընթացի վրա, որի բովանդակությունն ու ծավալը տարբեր են լայն իմաստով միջազգային իրավաստեղծման գործընթացի դեպքում և նեղ իմաստով միջազգային իրավաստեղծման գործընթացի դեպքում: Լայն իմաստով միջազգային իրավաստեղծման դեպքում խոսքը գնում է միջազգային իրավունքի նորմերի մեկնաբանման, հստակեցման, զարգացման և կոդիֆիկացիայի մասին, իսկ նեղ իմաստով իրավաստեղծման դեպքում խոսքը միջազգային իրավունքի նորմերի ստեղծման բուն գործընթացի մասին է:

3. ՄԱԿ-ի միջազգային դատարանի որոշումների ուսումնասիրությունը և վերլուծությունը ցույց են տալիս, որ միջազգային իրավունքի մի շարք ճյուղերի շրջանակներում այդ դատարանի որոշումները վճռական ազդեցություն են ունեցել միջազգային իրավունքի զարգացման և կոդիֆիկացման վրա: ՄԱԿ-ի միջազգային դատարանը բազմիցս իր սահմանված իրավունքի կանոնները որակել է որպես միջազգային իրավունքի զարգացման արդյունք: ՄԱԿ-ի Միջազգային իրավունքի հանձնաժողովն իր հերթին հաշվի է առնում միջազգային դատարանների դատական պրակտիկան միջազգային իրավունքի առաջընթաց զարգացման և կոդիֆիկացման իր առաքելությունում: Միջազգային դատարանների որոշումները դարձել են միջազգային իրավունքի զարգացման գործիք:

4. ՄԱԿ-ի միջազգային դատարանի որոշումները մեծ ներգործություն ունեն միջազգային սովորութային իրավունքի ձևավորման գործընթացի վրա: Այդ ներգործությունը միջազգային սովորութային նորմերի ձևավորման վրա ունի երկակի դրսևորում: ՄԱԿ-ի միջազգային դատարանի որոշումներում բազմիցս անդրադարձ է կատարվել միջազգային սովորութային նորմերի ձևավորման գործընթացին, որի արդյունքում հստակեցվել և համակարգվել է միջազգային սովորութային նորմերի ձևավորման գործընթացը: Հստակեցվել են միջազգային սովորութային նորմերի առաջացման չափանիշները: Մյուս կողմից՝ միջազգային դատարանների որոշումներում շատ հաճախ կատարվում է պետական պրակտիկայի վերլուծություն ու ուսումնասիրվում է, թե արդյո՞ք կա «opinio juris» այդ պրակտիկայի վերաբերյալ՝ ցույց տալով նոր միջազգային սովորութային նորմի ի հայտ գալը կամ այդպիսի նորմի բացակայությունը:

5. Միջազգային դատարանների որոշումները կարող են նախաձեռնել համապատասխան միջազգային պրակտիկայի ստեղծում և պետություններին որոշակի չափով հակել այդ պրակտիկան որպես իրենց համար իրավաբանորեն պարտադիր ճանաչելուն: Միջազգային դատարանների որոշումները կարող են ներգործել պետությունների հետագա վարքագծի վրա, իսկ երբեմն էլ կանխորոշել այն, երբ որոշման մեջ հաջողվում է հաստատել էկվիլիբրիում պետությունների շահերի միջև: Արդյունքում կարող են ձևավորվել նոր միջազգային պայմանագրային և սովորութային նորմեր: Այսպես՝ ՄԱԿ-ի միջազգային դատարանը Բարսելոնա Թրակշն գործում առաջին անգամ խոսեց պետությունների «erga omnes» պարտականությունների մասին: Այդ որոշմանը հաջորդող պետական պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ «erga omnes» պարտականությունների կոնցեպցիան դարձել է միջազգային սովորութային իրավունքի մաս:

6. ՄԱԿ-ի միջազգային դատարանի որոշումները լրացնում են միջազգային իրավահարաբերությունների կարգավորման բացերը միջազգային իրավունքի նորմերի մեկնաբանման և հստակեցման միջոցով: Միջազգային արդարադատության մշտական պալատը և ՄԱԿ-ի միջազգային դատարանը իրենց որոշումներով լրացրել են արդեն իսկ գոյություն ունեցող միջազգային իրավունքի բացերը իրավունքը զարգացնելու, ադապտացնելու, հստակեցնելու, մեկնաբանելու կամ նույնիսկ նոր ուղղությամբ զարգացնելու իմաստով: ՄԱԿ-ի միջազգային դատարանը նաև ստեղծել է կայուն դատական պրակտիկա, որից, որպես կանոն, այդ դատարանը չի շեղվում՝ անկախ նրանից, որ ՄԱԿ-ի միջազգային դատարանի որոշումների դեպքում «stare decisis» կանոնը չի գործում: ՄԱԿ-ի Միջազգային դատարանի որոշումների վերլուծությունը ցույց է տալիս, որ միջազգային դատարանը հետևում է իր նախկին (ներառյալ՝ իր իրավանախորդի՝ Միջազգային արդարադատության մշտական պալատի) որոշումներում արտահայտված դիրքորոշումներին: Արդյունքում ձևավորել է կայուն դատական պրակտիկա, որն ընդհանուր իրավունքի համակարգում կոչվում է համոզիչ նախադեպ: Միջազգային դատարանների կայուն դատական պրակտիկան միջազգային իրավական կարգավորմանը հաղորդում է կուռ կառուցվածք և այն դարձնում է կանխատեսելի: Միջազգային դատարանների դատական պրակտիկան նպաստում է միջազգային իրավունքի հստակեցմանը, զարգացմանը և կոդիֆիկացմանը:

7. ՄԱԿ-ի միջազգային դատարանի որոշումների դերակա-տարությունը միջազգային իրավունքում փաստացիորեն անցել է այն

սահմաններից, որոնք նախատեսվել են այդ դատարանի կանոնադրության 38-րդ հոդվածով, որտեղ թվարկված են միջազգային իրավունքի ձևական աղբյուրներն ու միջազգային իրավունքի նորմերի սահմանման օժանդակ միջոցները: Այդ հոդվածն անկատար է երկու առումով: Մի կողմից, քանի որ անվանվում են միայն մի քանի օժանդակ միջոցներ իրավունքի կանոնների սահմանման համար, այն իրենից չի ներկայացնում վերջնական կարգավորում, այնպես որ ՄԱԿ-ի միջազգային դատարանը կարողանա օգտվել նաև այլ օժանդակ միջոցներից, ինչպիսիք են, օրինակ, միջազգային կազմակերպությունների որոշումներն ու պետությունների միակողմանի ակտերը, որոնք երբեմն միջազգային իրավունքի գիտությունում դիտարկվում են նաև որպես միջազգային իրավունքի ձևական աղբյուր: Մյուս կողմից այդ դատարանի որոշումների գործառույթը սահմանափակելով գոյություն ունեցող միջազգային իրավունքի մասին հուշում անելով՝ թերի է ամրագրվում դրանց ներգործությունը միջազգային իրավունքի նորմերի առաջացման գործընթաց վրա: Ամրագրված չէ ՄԱԿ-ի միջազգային դատարանի՝ միջազգային իրավունքի զարգացման (փաստացիորեն իրագործվող) առաքելությունը, ինչպես դա, օրինակ, առաջարկվել է ժամանակին Ազգերի լիգայի իրավաբանների խորհրդատվական հանձնաժողովի որոշ անդամների կողմից:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՓՈՐՁԱՐԿՈՒՄԸ: Ատենախոսության թեման հաստատվել է ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնում, որի նիստերի ժամանակ քննարկվել և գրախոսվել են ատենախոսության հիմնական դրույթները:

Ատենախոսության հիմնական դրույթները քննարկման առարկա են դարձել նաև Հայաստանի Միջազգային և համեմատական իրավունքի կենտրոնի առանձին մասնագետների, Գերմանիայի Դաշնային գերագույն վարչական դատարանի և Դաշնային գերագույն դատարանի առանձին դատավորների, Բեռլինի Հումբոլդթի և Հանովերի համալսարանների առանձին պրոֆեսորների հետ:

Ատենախոսության առանձին դրույթների վերաբերյալ հեղինակի կողմից զեկույց է ներկայացվել և քննարկումներ են ծավալվել 2014 թ. դեկտեմբերի 9-ին ԵՊՀ-ի իրավագիտության ֆակուլտետի կողմից կազմակերպված հայցորդների և ասպիրանտների մասնակցությամբ գիտական կոնֆերանսին:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, 3 գլուխներից, որոնք ներառում են 8 պարագրաֆ, եզրակացությունից, ինչպես նաև օգտագործված իրավական ակտերի և

գրականության ցանկից, իսկ ատենախոսության ձևավորումը համապատասխանում է ԲՈՀ-ի կողմից սահմանված պահանջներին:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ հիմնավորվել են ատենախոսության թեմայի արդիականությունը և արդյունքների գիտական նորույթը, ներկայացվել են ատենախոսության նպատակը և խնդիրները, թեմայի մշակվածության աստիճանը, ատենախոսության օբյեկտը և առարկան, ձևակերպվել են պաշտպանության ներկայացված հիմնական դրույթները: Ատենախոսության ներածությունը նաև տեղեկություններ է պարունակում աշխատանքի կառուցվածքի, տեսական, նորմատիվային և մեթոդաբանական հիմքերի, արդյունքների փորձարկման և գործնական նշանակության վերաբերյալ:

Առաջին գլուխը («Միջազգային իրավաստեղծման վրա միջազգային դատարանների որոշումների ներգործության ձևերը») բաղկացած է երեք պարագրաֆից և նվիրված է միջազգային դատարանակազմության ինստիտուտի զարգացման ու միջազգային իրավաստեղծման հարաբերակցությանը, միջազգային դատական իրավաստեղծման բովանդակության և ձևերի, ինչպես նաև ՄԱԿ-ի միջազգային դատարանի որոշումների ուսումնասիրմանը՝ որպես իրավունքի նոր կանոնների սահմանման օժանդակ միջոց:

Առաջին պարագրաֆում («Միջազգային դատարանակազմության ինստիտուտը ժամանակակից միջազգային իրավունքում») դիտարկվում է միջազգային դատարանակազմության ինստիտուտի զարգացման և միջազգային իրավաստեղծման գործընթացի հարաբերակցությունը: Հեղինակի կողմից ցույց է տրվում, որ, ըստ էության, տեղի է ունեցել միջազգային դատարանակազմության ինստիտուտի որակական փոփոխություն: Միջազգային դատարանների որոշումների ժամանակակից դերակատարության բովանդակության մասն է կազմում նաև միջազգային դատարանների գործունեության ներգործությունը միջազգային իրավաստեղծման գործընթացի վրա: Արդյունքում անհրաժեշտություն է առաջանում ուսումնասիրել դատական իրավաստեղծման բնույթը և դրա թույլատրելի սահմանները: Միջազգային իրավաստեղծման ինստիտուտի հիմնաքարը ՄԱԿ-ի միջազգային դատարանի կանոնադրության 38-րդ հոդվածն է: 38-րդ հոդվածի «ա»-«գ» կետերի թվարկումը ընդունված է համարել միջազգային իրավունքի ձևական աղբյուրների սպառիչ ցանկ, իսկ «դ» կետում թվարկված դատական որոշումներն ու առավել որակյալ

մասնագետների հայեցակարգերը՝ որպես օժանդակ աղբյուրների ցանկ: Ըստ հեղինակի՝ այդ հոդվածը փոփոխությունների կարիք ունի: Հաշվի առնելով ՄԱԿ-ի միջազգային դատարանի դերը ժամանակակից միջազգային իրավունքի կայացման գործընթացում՝ ներկայումս ակտիվ գիտական ուսումնասիրությունների առարկա է դարձել այդ դատարանի կանոնադրության 38-րդ հոդվածի «դ» կետը՝ փորձելով նորովի ընկալել, թե ինչպիսի կապ կա ՄԱԿ-ի միջազգային դատարանի որոշումների և միջազգային իրավաստեղծման գործընթացի միջև, ինչպես և ինչպիսի ծավալով է այն դրսևորվում:

Երկրորդ պարագրաֆում («Միջազգային դատական իրավաստեղծման առանձնահատկությունները») ներկայացվում են միջազգային դատական իրավաստեղծման առանձնահատկությունները միջազգային իրավունքի տարբեր ճյուղերի պարագայում: Այսպես՝ միջազգային իրավունքի գիտությունում մի շարք տեսություններ առանձնացնում են միջազգային դատական իրավաստեղծման երեք ձևեր՝ ուղղակի դատական իրավաստեղծում, անուղղակի դատական իրավաստեղծում և դատական իրավաստեղծումը որպես պատվիրակված օրենսդրություն: Ուղղակի դատական իրավաստեղծման ներքո ներկայացվում է միջազգային իրավունքի նոր նորմերի ստեղծումը ՄԱԿ-ի միջազգային դատարանի կողմից: Միջազգային իրավունքի մի շարք ականավոր գիտնականներ ՄԱԿ-ի միջազգային դատարանի որոշումները դիտարկում են որպես միջազգային իրավունքի աղբյուր: Հեղինակի կողմից ցույց է տրվում, որ ՄԱԿ-ի միջազգային դատարանի որոշումներում որոշակի աստիճան ստեղծագործական տարրի առկայության հավանականություն կա, սակայն, հեղինակի կարծիքով այդ դատարանին թույլատրված չէ ստեղծել իրավական համակարգից, ինստիտուտից կամ նորմից անկախ իրավունք: Անուղղակի դատական իրավաստեղծման ներքո ներկայացվում է դատարանի կողմից միջազգային իրավունքի նորմերի մեկնաբանումն ու միջազգային սովորութային իրավունքի ձևավորման գործընթացում դերակատարությունը: Պատվիրակված դատական իրավաստեղծման ներքո ներկայացվում են այն դեպքերը, երբ միջազգային դատարանին ուղղակիորեն պատվիրակվում է որոշակի վարքագծի կանոնների սահմանումը:

Երրորդ պարագրաֆում («Միջազգային դատարանների որոշումները որպես իրավունքի նորմերի սահմանման միջոց») դիտարկվում են ՄԱԿ-ի միջազգային դատարանների որոշումները որպես իրավունքի նորմերի սահմանման օժանդակ միջոց: Մայրցամաքային իրավական համակարգում գերիշխող տեսակետի համաձայն՝ միջազգային իրավունքի

ձևական աղբյուրներ են միջազգային պայմանագրային և սովորութային նորմերը՝ մերժելով միջազգային դատարանների որոշումների՝ իրավունքի աղբյուր լինելը և դրանք դիտելով որպես իրավունքի նորմերի սահմանման միջոց, երբ խոսքը գնում է միջազգային իրավաստեղծման դասական գործընթացի մասին: Միջազգային դատարանների որոշումները, ճիշտ է, նեղ իմաստով միջազգային իրավաստեղծման գործընթացի մաս չեն, բայց մեծ դերակատարություն և ներգործություն ունեն միջազգային իրավաստեղծման գործընթացի տարբեր մակարդակներում:

Երկրորդ գլուխը («Ազգերի լիգայի Միջազգային արդարադատության մշտական պալատի որոշումները և միջազգային իրավաստեղծումը») բաղկացած է երկու պարագրաֆից և նվիրված է ՄԱԿ-ի միջազգային դատարանի իրավանախորդի՝ Միջազգային արդարադատության մշտական պալատի որոշումների և միջազգային իրավաստեղծման հարաբերակցության ուսումնասիրությանը: Հեղինակը, կիրառելով պատմական մեկնաբանության գործիքները, փորձում է վերհանել միջազգային իրավունքի գիտությունում ակտիվորեն քննարկվող ՄԱԿ-ի միջազգային դատարանի կանոնադրության 38-րդ հոդվածի նախագծման հիմքում ընկած մոտեցումները՝ դրանք համադրելով այդ նույն հոդվածի ժամանակակից՝ երբեմն իրարամերժ մեկնաբանություններին:

Առաջին պարագրաֆում («Միջազգային արդարադատության մշտական պալատի որոշումների կարգավիճակը Դատարանի կանոնադրության 38-րդ հոդվածի տեսանկյունից») անդրադարձ է կատարվում Միջազգային արդարադատության մշտական պալատին՝ հասկանալու համար, թե ինչպիսի զարգացումներ են եղել միջազգային դատարանակազմության իրավունքում. Ազգերի լիգայի միջազգային արդարադատության մշտական պալատի գործունեությունն ու կանոնադրությունը հետագայում հիմք հանդիսացան ՄԱԿ-ի միջազգային դատարանի հիմնադրման համար, որը մինչ այսօր իր որոշումներում հղում է անում իր իրավանախորդի դատական որոշումներին և դրանցում արտահայտված իրավական դիրքորոշումներին («Լոտուս», «Մավրոմատիսի կոնցեսիան Երուսաղեմում», «Խոժուվեի գործարանը» և այլն:

Երկրորդ պարագրաֆում («Միջազգային արդարադատության մշտական պալատի կանոնադրության 38-րդ հոդվածի մշակումը Իրավաբանների խորհրդատվական հանձնաժողովի կողմից») ուսումնասիրվել է ՄԱԿ-ի կանոնադրության 38-րդ հոդվածի նախագծումը, որը առանց փոփոխությունների վերցվել է Միջազգային արդարադատության մշտական պալատի կանոնադրությունից:

Միջազգային իրավունքում գոյություն ունեցող մի շարք տեսությունների հիմքում ընկած է այն գաղափարը, որ ՄԱԿ-ի միջազգային դատարանի կանոնադրության 38-րդ հոդվածի «դ» կետի մեկնաբանությունը թույլ է տալիս պնդել, որ այդ դատարանը կարող է ստեղծել միջազգային իրավունքի նոր կանոններ: Հեղինակի կողմից ուսումնասիրվել և վերլուծության են ենթարկվել Ազգերի լիգայի Իրավաբանների խորհրդատվական հանձնաժողովին ներկայացված 38-րդ տարբեր նախագծերը: Այդ նախագծերից մի քանիսում հստակ առաջարկվել է դատարանին օժտել իրավաստեղծ իշխանությամբ: 38-րդ հոդվածի նախագծման աշխատանքների ուսումնասիրությունը թույլ է տալիս պնդել, որ այդ հոդվածի մեկնաբանության շրջանակներում որևէ կերպ չի տեղավորվում ՄԱԿ-ի միջազգային դատարանի կողմից միջազգային իրավունքի նոր նորմերի ստեղծումը, բայց մյուս կողմից թույլ է տալիս պնդել, որ դեռևս այն ժամանակ արդեն իսկ կանխատեսվել է, որ այդ դատարանի գործունեությունը էական ներգործություն է ունենալու միջազգային իրավաստեղծ գործընթացի վրա:

Երրորդ գլուխը («ՄԱԿ-ի միջազգային դատարանի որոշումները և միջազգային իրավաստեղծումը») բաղկացած է երեք պարագրաֆից և հանգամանալից անդրադառնում է ՄԱԿ-ի միջազգային դատարանի որոշումների և միջազգային իրավաստեղծման գործընթացի միջև կապին՝ ուսումնասիրելով այդ դատարանի նախադեպային իրավունքը, այդ դատարանի կողմից միջազգային իրավունքը զարգացնելը և վերլուծելով միջազգային իրավունքի վրա այդ դատարանի առանձին որոշումների ազդեցությունը:

Առաջին պարագրաֆում («Միջազգային իրավունքի զարգացումը և նախադեպը ՄԱԿ-ի միջազգային դատարանում») հեղինակը անդրադարձել է ՄԱԿ-ի միջազգային դատարանի նախադեպային իրավունքին, քանի որ միջազգային իրավունքի գիտությունում ՄԱԿ-ի միջազգային դատարանի կողմից իրավաստեղծման հնարավորությունը հաճախ կապում են այդ դատարանի որոշումների նախադեպային ազդեցության հետ: Հեղինակը անդրադարձել է այդ դատարանի որոշումների նախադեպային իրավունքի կարգավիճակին: Ըստ հեղինակ՝ ՄԱԿ-ի միջազգային դատարանի որոշումների դեպքում չի գործում իրավունքի ընդհանուր համակարգին հատուկ «stare decisis» սկզբունքը: Հետևաբար՝ դատարանի նախադեպային իրավունքը չի կարող դիտարկվել որպես միջազգային իրավունքի ձևական աղբյուր: Մյուս կողմից չպետք է մոռանալ, որ ՄԱԿ-ի միջազգային դատարանի դատական պրակտիկան մեծապես նպաստում է միջազգային իրավունքի կայուն զարգացմանն ու կանխատեսելիությանը:

Հեղինակը նաև անդրադարձել է ՄԱԿ-ի միջազգային դատարանի կողմից միջազգային իրավունքի զարգացմանը՝ միջազգային իրավունքի զարգացումը դիտարկելով որպես լայն իմաստով միջազգային իրավաստեղծում: Հեղինակը գտնում է, որ ցանկալի է դատարանի կանոնադրությամբ ամրագրել այդ դատարանի կողմից միջազգային իրավունքը զարգացնելու առաքելությունը որպես այդ դատարանի գործառույթ:

Երկրորդ պարագրաֆում («ՄԱԿ-ի միջազգային դատարանի որոշումները և միջազգային իրավաստեղծումը») հեղինակը ուսումնասիրել է ՄԱԿ-ի միջազգային դատարանի որոշումների ազդեցությունը միջազգային իրավունքի վրա որոշակի ժամանակահատվածում՝ փորձելով բացահայտել, թե արդյոք կա պատճառահետևանքային կապ միջազգային իրավունքի փոփոխության և այդ դատարանի որոշումների միջև: Հեղինակը անդրադարձել է նաև այն հարցին, թե արդյո՞ք ՄԱԿ-ի միջազգային դատարանի որոշումները կարող են ներազդել պետությունների վարքագծի վրա, չնայած որ չկա հարկադրման կենտրոնական մեխանիզմ: Ուսումնասիրվել է նաև ՄԱԿ-ի միջազգային դատարանի որոշումների ազդեցությունը իրավաբան գիտնականների միջև իրավական դիսկուրսի վրա:

Հեղինակը ուսումնասիրել է նաև ՄԱԿ-ի միջազգային դատարանի կանոնադրության 38-րդ հոդվածը ժամանակակից միջազգային իրավունքի զարգացումների ներքո. դատարանը իր որոշումներում կանոնադրորեն իրավասու չէ միջազգային իրավունքի նոր նորմեր ստեղծել, սակայն այդ դատարանի դերակատարությունը մեծ է միջազգային իրավաստեղծման գործընթացում, որը դրսևորվում է տարբեր կերպ երկու տարբեր մակարդակներում՝ լայն իմաստով միջազգային իրավաստեղծման և նեղ իմաստով միջազգային իրավաստեղծման դեպքում:

Երրորդ պարագրաֆում («ՄԱԿ-ի միջազգային դատարանի «Barcelona Traction» և «Fisheris Jurisdiction» գործերով որոշումների վերլուծությունը միջազգային իրավաստեղծման տեսանկյունից») հեղինակը վերլուծել է դատարանի երկու որոշումներ, որոնք միմյանցից շեշտակիորեն տարբերվում են միջազգային իրավունքում թողած իրենց ներգործության մասշտաբներով: Հեղինակը իրականացրել է համեմատական վերլուծություն երկու հարթություններում՝ ուսումնասիրելով միջազգային իրավունքի վիճակի փոփոխությունը միևնույն գործի շրջանակներում և ապա միմյանց հետ համեմատելով այդ երկու որոշումները: Վերլուծության հիմնական նպատակն է փորձել հասկանալ, թե ինչպիսին էր միջազգային իրավական կարգավորումը

վերոնշյալ երկու որոշումներից առաջ, որոշումները կայացնելիս և այդ որոշումներին հաջորդող ժամանակահատվածում: «Barcelona Traction» գործով որոշումը ՄԱԿ-ի միջազգային դատարանի այն որոշումներից է, որն ընկած է միջազգային իրավունքի գիտությունում առկա այն հայեցակարգերի ու տեսությունների հիմքում, որոնք պնդում են, որ ՄԱԿ-ի միջազգային դատարանն իր որոշումներում միջազգային իրավունքի նոր նորմեր է ստեղծում: Այս գործում դատարանն իր որոշման մեջ առաջին անգամ խոսեց «erga omnes» պարտականությունների մասին, երբ որոշակի միջազգային իրավունքների պաշտպանության հարցում կարող են հետաքրքրություն ունենալ բոլոր պետությունները: «Erga omnes» պարտականությունների կոնցեպցիայի զարգացման վերլուծությունը ցույց է տալիս, որ այն դարձել է միջազգային իրավունքի նորմ, որը բազմիցս վկայակոչվել է ՄԱԿ-ի միջազգային դատարանի կողմից իր որոշումներում:

Այս պարագրաֆում հեղինակը վերլուծել է նաև մի կողմից Մեծ Բրիտանիայի ու Իսլանդիայի և մյուս կողմից Գերմանիայի և Իսլանդիայի միջև ՄԱԿ-ի միջազգային դատարանի «Fisheris Jurisdiction» գործով կայացրած որոշումը, որը, ի տարբերություն «Barcelona Traction» գործի, չունեցավ որևէ ազդեցություն միջազգային իրավունքի որևէ կանոնի զարգացման վրա:

ՄԱԿ-ի միջազգային դատարանի մի շարք որոշումների վերլուծությունը ցույց է տալիս, որ այդ դատարանի որոշումները չեն ազդում պետությունների վարքագծի վրա միայն այդ դատարանի հեղինակության հիման վրա, այլ դատարանը պետք է ձգտի մեծամասնության համար ընդունելի լուծումներ գտնել իր որոշումներում. այլ կերպ ասած՝ հաստատի էկվիլիբրիում պետությունների շահերի միջև: «Barcelona Traction» գործում դատարանը չփորձեց հիմնավորել «erga omnes» պարտականությունների առաջացումը, բայց դատարանի այդ որոշումը հիմնարար ազդեցություն ունեցավ պետությունների միջազգային պատասխանատվության իրավունքում երրորդ պետությունների իրավասության կոնցեպցիայի զարգացման վրա: Դրան հակառակ՝ ՄԱԿ-ի միջազգային դատարանը «Fisheris Jurisdiction» գործում նույնիսկ մի քանի հղում կատարեց պետական պրակտիկայի վրա ափամերձ պետությունների բացառիկ ձկնորսական գոտին 12 ծովային մղոնով սահմանափակելու համար, բայց այդ որոշումը էական ազդեցություն չունեցավ միջազգային իրավունքի այս ոլորտի հետագա զարգացման վրա:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐԸ

Ատենախոսության առարկայի ուսումնասիրության արդյունքում հեղինակի կողմից կատարվել են հետևյալ հիմնական եզրահանգումներն ու առաջարկությունները.

1. Գտնում ենք, որ ՄԱԿ-ի միջազգային դատարանի կանոնադրության 38-րդ հոդվածը փոփոխության և լրացման կարիք ունի. այդ հոդվածում իրավունքի նորմերի սահմանման օժանդակ միջոցների թվարկումը չպետք է լինի սպառիչ՝ դատարանին հնարավորություն տալով իր հայեցողությամբ օգտվել նաև այլ օժանդակ միջոցներից միջազգային իրավունքի նորմեր սահմանելիս: Միաժամանակ ՄԱԿ-ի միջազգային դատարանի որոշումների կարգավիճակի սահմանումը պետք է ամբողջությամբ արտացոլի այդ դատարանի դերակատարությունը միջազգային իրավաստեղծման գործընթացում:

2. ՄԱԿ-ի միջազգային դատարանի որոշումները այլևս միայն օժանդակ միջոցներ չեն միջազգային իրավունքի նորմեր սահմանելու համար: Այդ դատարանն ավելի մեծ դերակատարություն ունի միջազգային իրավաստեղծման գործընթացում, որի դրսևորման ձևն և չափը տարբերվում են միջազգային իրավունքի առանձին աղբյուրների դեպքում:

3. Միջազգային իրավունքի գիտությունում գոյություն ունեն մի շարք տեսություններ, որոնց համաձայն ՄԱԿ-ի միջազգային դատարանը մի շարք որոշումներում ուղղակիորեն ստեղծել է միջազգային իրավունք, սակայն դատարանի որոշումների վերլուծությունը ցույց է տալիս, որ դատարանն իր այդ որոշումներում ընդամենը ամփոփել, հստակեցրել և կոնկրետացրել է միջազգային իրավունքում գոյություն ունեցող իրավունքի կանոնները: Դա չի նշանակում, որ այդ դատարանը չի ներգործում միջազգային իրավաստեղծման գործընթացի վրա, բայց ձևական տեսանկյունից դատարանի որոշումները նեղ իմաստով միջազգային իրավաստեղծման գործընթացի մաս չեն կազմում:

4. ՄԱԿ-ի միջազգային դատարանի կանոնադրության մշակման ժամանակ եղել է մտահոգություն, որ դժվար է լինելու այդ դատարանին զերծ պահել իրավաստեղծման գործընթացից: Միջազգային արդարադատության մշտական պալատի և ՄԱԿ-ի միջազգային դատարանի հետագա գործունեությունը ցույց տվեց, որ հնարավոր չէ այդ դատարանին ամբողջությամբ զերծ պահել միջազգային իրավաստեղծման գործընթացի վրա ներգործությունից:

5. Հաշվի առնելով, որ ՄԱԿ-ի միջազգային դատարանը իր գործունեությամբ մեծապես նպաստել և շարունակում է նպաստել

միջազգային իրավունքի մի շարք ճյուղերի զարգացմանը՝ կարևորում ենք ՄԱԿ-ի միջազգային դատարանի կանոնադրության բարեփոխումների ժամանակ ամրագրել միջազգային իրավունքի զարգացումը որպես այդ դատարանի գործառույթ:

6. Ի տարբերություն միջազգային պայմանագրային իրավունքի՝ միջազգային սովորութային իրավունքի ձևավորման գործընթացի վերաբերյալ չկան կոդիֆիկացված փաստաթղթեր: Ուստի ՄԱԿ-ի միջազգային դատարանի որոշումները անքակտելիորեն կապված են միջազգային սովորութային իրավունքի ձևավորման գործընթացի հետ: Կարևորում ենք ՄԱԿ-ի միջազգային դատարանի դատական պրակտիկայի ուսումնասիրությունը և հաշվի առնելը միջազգային սովորութային իրավունքի կոդիֆիկացման ժամանակ, քանի որ այդ դատարանը իր որոշումներում բազմիցս անդրադարձել է սովորութային նորմերի ձևավորման գործընթացի առանձին ասպեկտներին:

7. ՄԱԿ-ի միջազգային դատարանի կանոնադրության պատմական, համակարգային, քերականական վերլուծությունը վկայում է, որ դատարանը կաշկանդված չէ իր նախկին որոշումներով «stare decisis» սկզբունքի իմաստով: ՄԱԿ-ի միջազգային դատարանի նախադեպային իրավունքը երկու իրավական համակարգերի միջև փոխզիջման արդյունք է, առանց որի դժվար կլինի երաշխավորել միջազգային իրավունքի կանխատեսելիությունը և կայուն զարգացումը:

8. Միջազգային իրավունքում, ինչպես և իրավունքի ցանկացած ճյուղում առկա են իրավակարգավորման բացեր, որոնք լրացնելու գործընթացներն, ի տարբերություն ներպետական իրավունքի, առավել բարդ են և ժամանակատար. ՄԱԿ-ի միջազգային դատարանը կարող է միջազգային իրավունքի մեկնաբանման և հստակեցման գործիքակազմի միջոցով լրացնել այդ բացը՝ միաժամանակ խթան հանդիսանալով պետությունների կողմից միջազգային իրավունքի նոր կանոնի ստեղծմանը

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. *Յարմալոյան Հ.* Արդարադատության միջազգային դատարանի՝ «Բարսելոնա Թրաքշն» գործով որոշման վերլուծությունը այդ դատարանի կողմից միջազգային իրավաստեղծման հավանականության տեսանկյունից// Դատական իշխանություն, Երևան, 2014, թիվ 7-8/181-182, 58-65 էջեր,

2. *Յարմալոյան Հ.* Միջազգային դատական որոշումների կարգա-

վիճակի վերաբերյալ մայրցամաքային և ընդհանուր իրավական համակարգերում առկա մոտեցումների համեմատական վերլուծություն// Պետություն և իրավունք, Երևան, 2013, թիվ 4 (62), 103-111 էջեր,

3. *Յարմալոյան Հ.* ՄԱԿ-ի միջազգային դատարանի որոշումների նախադեպային բնույթը// Դատական իշխանություն, Երևան, 2013, թիվ 6/167, 22-25 էջեր,

4. *Յարմալոյան Հ.* Միջազգային արդարադատության մշտական դատարանի որոշումների կարգավիճակը դատարանի ստատուտի 38-րդ հոդվածի լույսի ներքո// Դատական իշխանություն, Երևան, 2013, թիվ 3/164, 18-23 էջեր,

5. *Յարմալոյան Հ.* ՄԱԿ-ի միջազգային դատարանի որոշումների դերակատարությունը միջազգային իրավաստեղծման գործընթացում// Դատական իշխանություն, Երևան, 2012, թիվ 7/156, 20-23 էջեր:

РЕЗЮМЕ

ЯРМАЛОЯН ГРАЧИК МАНВЕЛОВИЧ

РОЛЬ МЕЖДУНАРОДНОГО СУДА ООН В ПРОЦЕССЕ МЕЖДУНАРОДНОГО ПРАВОТВОРЧЕСТВА

Международные суды были созданы, чтобы служить в качестве инструмента мирного разрешения международных споров. В результате развития международного права были сформированы новые международные судебные органы, и роль международных судов в системе международного права подверглась модификациям с 1920-ых гг.. Международные суды, в особенности Международный суд ООН (Суд), ныне считаются не только механизмом решения международных споров. Новой характерной чертой Суда считается влияние этого суда на процесс международного правотворчества. Существует несколько концепций и теорий, которые утверждают, что Суд создает новые нормы международного права в своих решениях.

Основной целью диссертационной работы является изучение роли решений Суда в процессе международного правотворчества, а также анализ пункта “г” статьи 38 статута Суда, включая идентификацию объёма и форм влияния решений Суда над процессом правотворчества, выявление существующих законодательных пробелов и недостатков и предоставление рекомендаций, направленных на модификации статута Суда, чтобы статут суда соответствовал актуальной роли этого суда в процессе международного правотворчества.

Статья 38 статута Суда считается фундаментом международного правотворчества. Согласно общему мнению в науке международного права в статье дается исчерпывающий перечень формальных источников международного права: международные конвенции, международное обычное право, общие принципы права, а согласно пункту “г” этой статьи судебные решения и доктрины наиболее квалифицированных специалистов по публичному праву различных наций, вспомогательные средства для определения правовых норм.

Статья 38 была подвергнута критике международного права по нескольким причинам: статья дает исчерпывающее перечисление вспомогательных средств для определения правовых норм, но в совре-

менном международном праве возникли новые вспомогательные средства. Поэтому предлагается изменить пункт “г” статьи 38 и дополнить пункт новыми средствами определения правовых норм, исключая исчерпывающее перечисление, чтобы суд мог применять новые вспомогательные средства, если такие возникнут в международном праве.

Анализ статутов Суда и Постоянной палаты международного правосудия (ППМП) и их прецедентного права показывает, что Суд не наделен полномочием создать новые нормы международного права, а прецеденты Суда не являются обязательными в смысле принципа “stare decisis”. Одновременно анализ судебной практики Суда и его роли в процессе международного правотворчества показывает, что роль решений переходит границы, которые начертаны статьей 38, которая устанавливает, что решения Суда - вспомогательные средства для определения правовых норм. Суд играет большую роль в международном правотворческом процессе, который можно понять в двух смыслах: (1) широкое понятие международного правотворчества, которое включает интерпретацию, конкретизацию, развитие и кодификацию международного права, и (2) классическое узкое понятие, которое включает формальные источники международного права.

Анализ судебной практики Суда показывает, что суд непосредственно принимает участие в международном правотворчестве в широком смысле посредством интерпретации, конкретизации, развитии и восполнения пробелов международного права. Суд сыграл значительную роль в развитии несколько отраслей международного права. С другой стороны, Комиссия международного права ООН тщательно изучает решения Суда вовремя развития и кодификации международного права. Что касается роли Суда в правотворчестве в классическом узком понимании, то участие суда посредственно: суд находит нормы международного обычного права. Суд также конкретизировал некоторые критерии международного обычного правотворчества. Что касается международного договорного права, то решения Суда могут повлиять на поведение государств в тех случаях, когда Суду удается найти эквилибриум между интересами государств, таким образом, “убеждая” государства создать новые договорные нормы. Суд сыграл также важную роль в развитии международного договорного права.

SUMMARY

HRACHIK MANVEL YARMALOYAN

THE ROLE OF UN INTERNATIONAL COURT OF JUSTICE IN THE PROCESS OF INTERNATIONAL LAW-MAKING

International courts were created to serve as peaceful means for settling disputes between the states. In the result of developement of international law many new international judicial bodies were established and the role of international courts in the system of international law has had significant modifications since 1920s and international courts, especially International Court of Justice (ICJ,) are currently considered not only as mechanisms of international dispute settlement. As a new feature of ICJ is currently considered the influence of that court on the process of international law-making. There are several concepts and theories which state that ICJ creates new norms of international law in its decisions.

The main objective of the thesis is the research on the role of the decisions of ICJ in the process of international law-making as well as analysis of paragraph „d“ of Article 38 of ICJ Statute, including identification of the dimensions and forms of influence of ICJ decisions on international law-making, finding out the legislative gaps and shortcomings and recommendations directed to the modification of ICJ Statute in order to comply with the actual role of ICJ in international law-making process.

Article 38 of ICJ Statute is considered to be the foundation of the international law-making process. According to the general opinion in the science of international law this article gives the exhaustive list of the formal sources of international law, and according to paragraph “d” of this article the judicial decisions and the teachings of the most highly qualified publicists are subsidiary means for the determination of rules of law.

Article 38 has been criticized in the science of international law for few reasons: it gives exhaustive list of subsidiary means for the determination of the rules of law but new subsidiary means for the determination of the rules of law have emerged in modern international law. Hence, it would be preferable to modify the paragraph “d” of Article 38 adding new subsidiary means for determination of rules international law and formulating that paragraph in non-exhaustive way, so that ICJ could use other subsidiary means when such emerge in international law.

The analysis of ICJ and PCIJ statutes and of the precedential law of

those courts show that ICJ is not authorized to create new norms of international law and the precedents of ICJ are not obliging in the sense of "stare decisis" rule. At the same time analysis of judicial practice of ICJ and its role in international law-making shows that the role of the decisions has gone beyond the limits foreseen for that court in its statute's Article 38 stating that the decisions of ICJ are only subsidiary means for the determination of rules of law. ICJ plays greater role in international law-making process, which can be understood in two ways: (1) wider understanding of international law-making, which includes interpretation, concretizing, development and codification of international law, and (2) classical narrow understanding which includes the formal sources of international law: international conventions, international customary law and general principles of law.

The analysis of the judicial practice of ICJ shows that it directly participates in international law-making in wider sense by interpreting, concretizing, developing and filling in the gaps of international law: ICJ has played significant role in development of several branches of international law (international law of the sea, international law of treaties, international humanitarian law etc.). On the other hand, the ICJ decisions are carefully taken into consideration by the UN Commission of International Law when developing and codifying international law. Hence, it would be preferable to somehow regulate the mission of ICJ in the development of international law as it was proposed during drafting PCIJ Statute.

As to the role of ICJ in international law-making process in classical narrow sense, the court's participation is indirect: ICJ finds out international customary rules. ICJ has also clarified and concretized some criteria of international customary law-making. As to the international treaty law, ICJ decisions can influence the behavior of the states in cases when the court finds equilibrium among the interests of the states: thus "persuading" the states to create new treaty norms. The court has also played important role in the development of international treaty law.